ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱԲԳԱՐ ԱԲԵՂԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ԵՐԵՎԱՆԻ ՋՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Քրիստոս Աստուած մեր, շնորհեա մեզ ընդ Պետրոսի և ընդ որդւոցն Զեբեդեա արժանաւորիլ քում աստուածային տեսլեանդ»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ:

Մինչ մեր Տիրոջ Հրաշափառ Պայծառակերպության շուրջ ձեզ հետ խորհրդածելը, ես նախ գոհություն և փառք եմ մատուցում Բարձյալն Աստուծո, որ տարիներ առաջ առաջնորդեց ինձ դեպի Միածնաէջ Սուրբ Տաճարը, ուր անցավ իմ ուսման ընթացքը և քառասուն օրեր առաջ արժանացրեց ինձ քահանայական ձեռնադրության: Նաև այս Սուրբ Խորանից հիշատակն եմ ուզում ոգեկոչել երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի, որի գահակալության օրոք ընդունվեցի Հոգևոր Ճեմարան, և որն եղավ մեր ուսուցիչն ու դաստիարակը, որի անձը իմ առջև ունեցա իբրև տիպար գիտնական և շնորհաշատ հոգևորականի: Իմ երախտագիտության խոսքս եմ ուղղում նաև Ամենայն Հայոց Հայրապետին մեր՝ Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին, որի բարձր կարգադրությամբ և նախագահությամբ տեղի ունեցավ ձեռնադրության արարողությունը: Նաև իմ հոգևոր ծնողիս՝ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանին, որ մատուցեց Սրբազան Պատարագը և որի ընթացքին իր աղոթքների և ձեռնադրության շնորհիվ ընդունեցինք կուսակրոն քահանայի կոչում:

Իմ հարգանքի խոսքն եմ ուղղում բոլոր նրանց, ովքեր Լուսավորչյան Սուրբ յուղը ավելացրին հոգուս կանթեղի մեջ՝ այն ավելի վառ և լուսաբեր դարձնելու նպատակով: Նաև իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ճշմարտապես Ջորավոր Սուրբ Աստվածածին Եկեղեցու հոգևոր դասին, որ սիրով ընդառաջեցին փափագիս անդրանիկ և Ուխտի պատարագս մատուցելու այս Սուրբ կամարների տակ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին: Ժողովուրդն այն կոչում է Վարդավառ: Ավետարանական պատումը հետևյալն է: Հիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին, և նրանց առանձին հանեց մի բարձր լեռ և նրանց առաջ կերպարանափոխվեց. և Փրկչի դեմքը փայլեց, ինչպես արեգակը, և Տիրոջ զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը...

Այս նվիրական պահին իմ աղերսն եմ ուղղում առ Աստված, Սուրբ Ներսես Շնորհալու բառերով, որ Նա շնորհի մեզ Ս. Պետրոսի և Զեբեդեոսի որդիների հետ, արժանավորվել տեսնելու Աստվածային տեսիլքը:

Այսօր Թաբոր Լեռան վրա Աստվածությունը պայծառապես իրեն հայտնեց ողջ մարդկությանը: Ես այն կոչում եմ Պայծառակերպված Հայտնություն: Աստվածության հայտնությունը դեպք է, իրադարձություն, որ կատարվում է ներքին

աշխարհում, աշխարհում հոգևոր, լույս է, որ բխում է անհուն ակունքներից: Այն կատարվում է հոգով և հոգևոր աշխարհից ժայթքում, ճեղքում է բոլոր սահմանները և արտահայտվում երևելի աշխարհում, մեզ ծանոթ կյանքում, հայտնվում մարդուն իբրև հոգևոր էակի:

«Անկան ի վերայ երեսաց իւրանց, եւ երկեան յոյժ», ասում է ավետարանիչը: Ո՞վ կարող էր դիմանալ այդ Անիմանալի լույսին: Ո՞ր հողեղեն արարածը չէր ընկնի գետնի վրա: Որի՞ աչքը կարող կլիներ տեսնելով տեսնել և չզարհուրել տեսածից, քանզի «լուսաւորեցաւ երեսք նորա իբրեւ զարեգակն. եւ հանդերձք նորա եղեն սպիտակք իբրեւ զլոյս»:

Աստված ծածուկ է պահում իրեն բնական, տեսանելի «*Սեկուլյար*» աշխարհում: Աստվածային լույսի պայծառությունը կայրեր կամ կկուրացներ բնական որևէ հայացք, եթե հեղվեր նրա վրա իր ամբողջ փառքով: Հինկտակարանյան մարդը չէր կարող տեսնել Աստծուն: Լույսը ճառագայթվում էր նրա վրա աստիճանաբար, և նվազում ընկալողի անպատրաստության և անկարողության հետևանքով: Որովհետև ոչ միայն լույսի պայծառության պատճառով մարդ անկարող է դառնում հայել դեպի այն, այլ նաև աչքի տկար կամ հիվանդ լինելը կարող է պատճառ հանդիսանալ հայացքը ետ դարձնելու լույսից:

Սիրելիներ, Աստված իրեն հայտնում է միայն կրոնական խիղճ ունեցողին, հոգևոր էակին: Հոգին հայտնվում է հոգուն և Միտքը՝ մտքին: Պայծառակերպության երևույթը նախապայման է ներքին լուսավորման, պարզության, պայծառության: Անթափանց նյութին՝ «*մատերիա*» քարին չի կարող հայտնվել Աստվածությունը: Պայծառակերպության պահը երկկողմանի՝ Աստվածմարդկային գոյավիճակ է, «*պրոցես*»՝ հանդիպում ներքնապես հարազատ երկու էությանց: Պետք է որ լինի բարեպատեհ մթնոլորտ հաղորդակից լինելու հայտնությանը, մթնոլորտ, որին խորթ չէ Աստվածայինը: Աստվածությունը չի կարող հայտնվել մեկին, որ չունի իր մեջ ձգտում ընդառաջելու Աստվածայինին: Պայծառակերպությունը միայն ավետարանական պատմական դեպք չէ, որ տեղի ունեցավ Թաբոր Լեռան վրա, և որի մասին գրեցին ավետարանիչները: Այն մշտապես տեղի է ունենում մեր կյանքում, տեղի է ունենում ինձ, քեզ և անհատապես ամենքի հետ, վերապրվում անձնական հոգևոր փորձառությամբ: Եթե ոչ, ի՞նչ իմաստ ունի ինձ համար Պայծառակերպության պահը, եթե այն տեղի ունեցավ, կամ այն վերապրեցին միայն Ս. Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները: Հայտնվում է ինձ համար միայն այն, ինչ հայտնվում է իմ մեջ: Ունի իմաստ ինձ համար միայն այն դեպքը, եղելությունը, որ կատարվում է ինձ հետ: Հոգևոր հայտնությունը այն իրավիճակն է, որ կատարվում է ոչ միայն ինձ համար, այլ նաև ինձ հետ, այն ներքին հոգևոր վերափոխում է իմ մեջ: Եթե այդ ներքին վերափոխումը ինձ հետ տեղի չունեցավ, ապա ինձ համար ոչ մի իմաստ չունեն այն դեպքերը, որ ներկայացվում են Ս. Գրքի մեջ իբրև Աստվածության հայտնություն: Ավետարանը պետք է մեկնաբանվի անձնական հոգևոր փորձառության լույսի ներքո: Սրանից դուրս Ավետարանական պատմությունը ոչ ավելի է, քան այլ պատմական դեպք:

Սիրելի հավատացյալ հայորդիներ.

Պայծառակերպված Քրիստոսի հետ հանդիպումը պետք է որ գոյափոխի մեր գիտակցությունը, վերափոխի բանականության կառուցվածքը՝ *«ստրուկտուրան»*, գիտակցության մեջ ծնի նոր օրգաններ՝ ուղղված դեպի այլ աշխարհ: Աստվածության հայտնությունը բանականության զարգացման պրոցես չէ, այլ բանականության հեղափոխություն:

«Եւ լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն»: Հոգևոր հրաշեղուկ զանգվածը, որ Առաքյալը նմանեցնում է արեգակնային լույսի, պետք է ձուլի մեր բանականությունը, վերացնի մեր և հոգևոր աշխարհի միջև գոյություն ունեցող սահմանը, ցնցի մեր Էությունը:

Եվ ես այս նվիրական պահին, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպված Հայտնությունը մեր մեջ վերապրեցնելով իմ աղերսն եմ ուղղելու առ Աստված, որ Նա շնորհի մեզ Ս. Պետրոսի և Զեբեդեոսի որդիների հետ արժանի լինել տեսնելու Պայծառակերպված Հիսուսին:

Շնորհք, սեր և Աստվածային սրբարար օրհնությունը եղիցին ընդ ձեզ հավիտյանս: ԱՄԵՆ.